ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

25.11.2016թ. | ժամը 12:00-14:00 | ՀՀ կառավարություն

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության իրավական աջակցության ծառայության պետ
	Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխտնօրեն
	Արմեն Ստեփանյան	«Գեոթիմ» փակ բաժնետիրական ընկերության կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ
	Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի խորհրդական
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության փոխտնօրեն
	Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ
	Էրիկ Գրիգորյան	«Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» հասարակական կազմակերպության

	համանախագահ
Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ

ՀՀ կառավարության աշխատակազմ

Կարապետ Վարդանյան	ՀՀ վարչապետի օգնական
Արամ Ասատրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
Լուսինե Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ
Լիլյա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդատու

Հյուրեր՝

Դեբորա Գրիզեր	ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի ղեկավար
Ռաբաբ Շամայլեհ	ԱՄՆ ՄԶԳ Հայաստան
Ջուդիթ Մարգարեթ Ֆարնուորթ	Մեծ Բրիտանիայի դեսպան
Արտաշես Դավթյան	Մեծ Բրիտանիայի դեսպանատուն
Մարգարետա Քրիստիանսոն	Շվեդիայի դեսպանատուն, գործերի հավատարմատար
Լուկաս Գասսեր	Շվեյցարիայի դեսպան
Նարինե Թադևոսյան	Համաշխարհային բանկ, ԱՃԹՆ խորհրդատու
Արտակ Մելքոնյան	ՄԱԿ, գլխավոր խորհրդական
Արթուր Համբարձումյան	քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ

Բացականեր՝

Հ. Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

Արձանագրող՝ Լ.Թովմասյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի բացում, ԲՇԽ-ի նախագահի ողջույնի խոսք, «ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խումբ ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման ընդունման մասին հայտարարություն

Դ.Հարությունյանը ողջունեց խմբի մասնակիցներին ԱՃԹՆ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստի կապակցությամբ և իր խոսքում ներկայացրեց ԱՃԹՆ-ի ներդրման կարևորությունը երկրի ներդրումային, գործարար միջավայրի բարելավման, հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման տեսանկյունից: Ներկայացվեց 2015թ. հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման պատրաստակամության մասին հայտարարությունից ի վեր ստանդարտի ներդրմանն ուղղված աշխատանքները, ինչպես նաև հայտարարվեց, որ 2016թ. նոյեմբերի 25-ի ՀՀ վարչապետի N 1104-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ ԱՃԹՆ բազմաշահառու խմբի անհատական կազմը: Ներկայացվեց ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացման և հրապարակման աշխատանքների ընթացքը:

Դ.Հարությունյանը հորդորեց ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներին՝ ակտիվորեն ներգրավվել նախաձեռնության ներդրման, մասնավորապես՝ ԱՃԹՆ-ի երկամյա աշխատանքային ծրագրի մշակման աշխատանքներին, ինչպես նաև փոխանցեց ՀՀ վարչապետի հանձնարությունը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը ներկայացնող անդամներին ԱՃԹՆ ներդրման աշխատանքերին պատասխանատու կերպով մասնակցություն ցուցաբերելու մասին:

Դ.Հարությունյանը շնորհակալություն հայտնեց միջազգային գործընկեր կազմակերպություններին ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքները արդյունավետ կերպով իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու համար և վստահություն հայտնեց շարունակական արդյունավետ համագործակցության հարցում:

2. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման վերաբերյալ ելույթներ

- **ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունների ներկայացուցիչներ**

ԲՇԽ-ի արդյունահանող ընկերությունները ներկայացնող անդամները իրենց խոսքում ողջունեցին նախաձեռնության ներդրումը Հայաստանում, ևս մեկ անգամ արտահայտեցին իրենց՝ սույն ձևաչափով համագործակցության պարաստակամությունը, հայտարարեցին, որ ԲՇԽ-ի իրենց խմբակցության անդամները սահմանված կարգով ընտրվել են ոլորտը ներկայացնող կազմակերպությունների կողմից և օժտված են համապատասխան մանդատով՝ ներկայացնելու արդյունահանող կազմակերպությունների շահերը և համագործակցելու կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ՝ համատեղ ուժերով ԱՃԹՆ-ի ներդրման գործում հաջողության հասնելու նպատակով:

- **ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ**

ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող անդամները հայտարարեցին, որ թեև ԱՃԹՆ-ն անմիջականորեն չի առնչվում բնապահպանությանը, իրենք կարևորում են նաև բնապահպանական հարցերը: Նշվեց, որ, համաձայն ԲՇԽ-ի կողմից հաստատված ազգային առաջնահերթությունների և աշխատանքային ծրագրի, ԱՃԹՆ-ն հնարավորություն է ընձեռում ջանքեր ներդնել այդ՝ թվում նաև բնապահպանական և սոցիալական ստանդարտների բարելավման ուղղությամբ: Կարևորվեց ԱՃԹՆ-ի դերը Ֆինանսական հաշվետվողականության բարձրացման, ինչպես նաև հանքարդյունաբերությանը վերաբերող ամբողջական տեղեկատվությունը մեկտեղելու առումով:

- **դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ (ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Մեծ Բրիտանիայի դեսպանատուն, Համաշխարհային բանկ)**

Ողջույնի խոսքով հանդես եկան ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի ղեկավար Դեբորա Գրիզերը, Մեծ Բրիտանիայի դեսպան Ջուդիթ Մարգարեթ Ֆարնուորթը, Համաշխարհային բանկի ԱՃԹՆ-ի խորհրդատու Նարինե Թադևոսյանը:

Դեբորա Գրիզերը ասաց, որ ուրախ է մասնակցել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստին և շնորհավորեց իր հայ գործընկերներին այդ կարևոր նախաձեռնության համար: Քանի որ նախաձեռնության շնորհիվ կառավարությունը պատրաստակամություն է ցուցաբերում բնական պաշարների կառավարման բարելավման նպատակով ներդնել թափացիկության համաշխարհային ստանդարտները, ԱՄՆ ՄԶԳ-ն այլ

միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ միասին պատրաստակամ են աջակցելու նախաձեռնության ներդման աշխատանքներին: ԱՄՆ ՄԶԳ-ն աջակցություն է ցուցաբերում նաև «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացման և www.geo-fund.am ինտերակտիվ կայքում դրանց հրապարակման աշխատանքներին:

Դեսպան **Ջուդիթ Մարգարեթ Ֆարնուորթը** նույնպես հայտնեց իր ուրախությունը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստին մասնակցության կապակցությամբ և ողջունեց ՀՀ կառավարության՝ ԱՃԹՆ ստանդարտը ներդնելու որոշումը, քանի որ այն համարվում է կառավարության կողմից կարևոր ազդակ Հայաստանի բնական պաշարների կառավարման հարցում դառնալու առավել հաշվետու իր քաղաքացիների առջև: Տիկին դեսպանը նշեց, որ իրենք գործընթացի սկզբից իրենց աջակցությունն են ցուցաբերել տրամադրելու խորհրդատվություն թե ինչպես միանալ նախաձեռնությանը և պահպանել անդամակցության կարգավիճակը: Լավ կառավարվող հանքարդյունաբերությունը կարող է ավելի շահավետ լինել Հայաստանի քաղաքացիների համար, և ԱՃԹՆ-ն կարող է լավ գործիք հանդիսանալ այս հարցում: Տիկին դեսպանը տեղեկացրեց, որ ԱՃԹՆ-ն սկսվել է Միացյալ Թագավորության վարչապետի առաջարկությամբ, 2002 թվականին: Բազմաշահառու խմբի ձևաչափը հանդիսանում է ԱՃԹՆ-ի ուժեղ կողմերից մեկը: Այլ երկրների փորձը ցույց է տալիս, որ ԱՃԹՆ-ն ուժեղ մեխանիզմ է երեք կողմերի միջև վստահության ձևավորման համար, որը կարող է տարածվել նաև բնապահպանական և սոցիալական ազդեցության հարցերի վրա: Տիկին դեսպանը նշեց, որ այսուհետ ևս Միացյալ Թագավորությունը պատրաստատ է աջակցություն ցուցաբերել Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքներին:

Համաշխարհային բանկի ԱՃԹՆ-ի խորհրդատու **Նարինե Թադևոսյանը** փոխանցեց Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի տնօրեն Լորա Բեյլիի ողջույնի խոսքը ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի առաջին պաշտոնական նիստի կապակցությամբ: **Նարինե Թադևոսյանը** նշեց, որ երկար քննարկումների արդյունքում արդեն իսկ պաշտոնապես ձևավորվել է ԱՃԹՆ-ի բազմաշահառու խումբը, և սկսվել ու շարունակվում են իրականացվել ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի ներկայացման համար պահանջվող աշխատանքները: Համաշխարհային բանկը ևս պատրաստ է օժանդակելու հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման և հատկապես ԱՃԹՆ-ի ներդրման և իրագործման աշխատանքներին:

3. Հարց և պատասխան

Նիստին ներկա զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները ԲՇԽ-ի անդամներին ուղղեցին իրենց հուզող

հարցերը, որից հետո նիստը շարունակվեց առանց զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների:

4. ԲՇԽ-ի խմբակցությունների կողմից իրենց խմբակցության խոսնակի ներկայացում

ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը ներկայացնող խմբակցությունը որպես խմբակցություն խոսնակ առաջադրեց **Խաչիկ Հակոբյանին**:

Քաղաքացիական հասարակության խմբակցության կողմից **առաջարկվեց** քննարկել այս հարցի շուրջ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված նկատառումը, այնուհետև նոր ներկայացնել խմբակցությունների խոսնակների թեկնածությունը:

5. ԲՇԽ-ի աշխատակարգի նախագծի քննարկում

- **ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի համառոտ ներկայացում, չհամաձայնեցված դյութների քննարկում**

Հակիրճ **ներկայացվեցին** ԲՇԽ-ի անդամների կողմից քննարկված ԲՇԽ-ի աշխատակարգի նախագծի հիմնական դրույթները: **Հայտարարվեց**, որ ս.թ. սեպտեմբերի 27-ին ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպությունների անդամների և հոկտեմբերի 3-ին ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության անդամների հետ անցկացվել են հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվել և համաձայնություն է ձեռք բերվել ԲՇԽ-ի աշխատակարգի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների և նկատառումների շուրջ:

- **ԲՇԽ-ի այլընտրանքային անդամների ընտրության կարգը, այլընտրանքային անդամների թիվը, նաև ըստ խմբակցությունների**

Հայտարարվեց, որ ԲՇԽ-ի արդյունահանող կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող խմբակցությունները ներկայացրել են առաջարկություն համապատասխան խմբակցությունների համար ունենալ մեկական այլընտրանքային անդամներ:

Առաջարկվեց, որ, քանի որ ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը ներկայացնող յուրաքանչյուր անդամ ներկայացնում է իր ոլորտը, ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը ներկայացնող անդամներից յուրաքանչյուրը ունենա իրեն փոխարինող այլընտրանքային անդամ, որը պետք է լինի նույն ոլորտի ներկայացուցիչ՝ հաշվի առնելով ԲՇԽ-ի ՀՀ կառավարությունը ներկայացնող խմբակցության առանձնահատկությունը:

Այլընտրանքային անդամների թվի վերաբերյալ ԲՇԽ-ն եկավ **համաձայնության**:

- **ԲՇԽ-ի աշխատակարգի նախագծի 58-րդ կետ**

Քննարկվեց և ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ **որոշվեց** ԲՇԽ-ի աշխատակարգի նախագծից **հանել** աշխատակարգի **58-րդ կետը**, ըստ որի ԲՇԽ-ի անդամների ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով)՝ ԲՇԽ-ի անդամը կարող է հեռացվել ԲՇԽ-ի կազմից, եթե առկա են հիմքեր, որ տվյալ անդամի մասնակցությունը կարող է վնասել ԱՃԹՆ-ի աշխատանքներին կամ Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի գործընթացի հեղինակությանը՝ համաձայն ԱՃԹՆ-ի ասոցիացիայի վարվեցողության կանոնների:

Առաջարկվեց, որ հետագայում, նման կարգավորում ունենալու պահանջի դեպքում, ԲՇԽ-ն ընդհանուր համաձայնությամբ կարող է փոփոխություն կատարել ԲՇԽ-ի աշխատակարգում:

- **Chatham House-ի կանոնի գործածում**

Հայտարարվեց, որ ԲՇԽ-ի անդամների կողմից ներկայացվել է առաջարկություն՝ ԲՇԽ-ի նիստերի արձանագրություններում կիրառել Chatham House-ի կանոնը՝ ըստ որի նիստի ժամանակ արտահայտված կարծիքները չպետք է վերագրվեն որևէ կոնկրետ խոսնակի, և արձանագրության մեջ պետք է նշվեն միայն նիստին ներկաների անունները: Կարող է սահմանվել բացառություն, և նիստի մասնակցի խնդրանքով արձանագրության մեջ կարծիքը կամ ելույթը ներկայացվել անվանանշմամբ:

Քննարկման արդյունքում, ելնելով ԲՇԽ-ի աշխատանքների արդյունավետության տեսանկյունից՝ ԲՇԽ-ն եկավ **ընդհանուր համաձայնության** աշխատակարգում ամրագրել դրույթ՝ ըստ որի ԲՇԽ-ի նիստի արձանագրության մեջ նիստի ժամանակ արտահայտված կարծիքները (առաջարկները, դիտողությունները, ելույթները) ներկայացվում են անանուն, սակայն մասնակիցների խնդրանքով կարող են կատարվել բացառություններ:

- **ԱՃԹՆ միջազգային քարտուղարության նկատառումներ**

✓ **Ներկայացվեց** ԱՃԹՆ միջազգային քարտուղարության առաջարկությունը ԲՇԽ-ի աշխատակարգում ունենալ դրույթ՝ համաձայն ԱՃԹՆ ստանդարտի 1.4.b.i պահանջի: **Քննարկվեց** նշված պահանջի նշանակությունը, և ԲՇԽ-ի անդամների **ընդհանուր համաձայնությամբ որոշվեց** ԲՇԽ-ի աշխատակարգում սահմանել դրույթ համաձայն ԱՃԹՆ ստանդարտի 1.4.b.i պահանջի՝ հետևյալ շարադրմամբ՝ «ԲՇԽ-ի անդամները պետք է ունենան կարողություններ իրականացնելու իրենց պարտականությունները:»:

✓ **Քննարկվեց** ԱՃԹՆ միջազգային քարտուղարության մտահոգությունը, որ ԲՇԽ-ի անդամների հաստատումը ՀՀ վարչապետի որոշմամբ կարող է ունենալ հսկողական և սահմանափակող բնույթ: ԲՇԽ-ն եկավ ընդհանուր

համաձայնության, որ ԲՇԽ-ի անդամների հաստատումը ՀՀ վարչապետի որոշմանբ նման բնույթ չունի, քանի որ յուրաքանչյուր խմբակցություն ընտրում և առաջադրում է խմբակցությունը ներկայացնող ԲՇԽ-ի անդամներին խմբակցության կողմից սահմանված ընթացակարգով կայացած ընտրության միջոցով:

✓ **Ներկայացվեց** ԱՃԹՆ միջազգային քարտուղարության առաջարկությունը՝ հրապարակել ԲՇԽ-ի երեք խմբակցությունների՝ իրենց անդամների ընտրության, անդամների փոփոխության ընթացակարգերը: **Որոշվեց**, որ խմբակցությունները կտրամադրեն իրենց կողմից հաստատված ԲՇԽ-ի անդամների ընտրության ընթացակարգերը դրանք հրապարակելու համար:

✓ **Ներկայացվեց** ԱՃԹՆ միջազգային քարտուղարության նկատառումը, թե արդյոք ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված ԲՇԽ-ի խմբակցությունների խոսնակների առկայությունը չի հակասում խմբակցության այլ անդամների հավասար իրավունքներ և պարտականություններ ունենալու դրույթին: **Պարզաբանվեց**, որ խմբակցության խոսնակի առկայության դրույթը սահմանվել է որոշ դեպքերում, մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով որոշումների ընդունման ժամանակ կամ այլ դեպքերում ԲՇԽ-ի խմբակցության որոշման հայտարարման և այլ աշխատանքային ընթացակարգերի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Համապատասխան նյութերը և փաստաթղթերը շրջանառվելու են ԲՇԽ-ի բոլոր անդամների միջև, և խմբակցության խոսնակը օժտված չի լինելու հավելյալ իրավունքներով: Խոսնակի անհրաժեշտությունը բխում է տեխնիկական, կազմակերպչական նկատառումներից, և խոսնակի պարտականությունը կայանալու է խմբակցությունը ներկայացնող անդամների կարծիքը հավաքագրելու և խմբակցության կապը ապահովելու մեջ:

Որոշվեց նոյեմբերի 26-27-ը կայանալիք ԲՇԽ-ի աշխատանքային հանդիպման ժամանակ քննարկել և հստակեցնել համապատասխան ձևակերպումները: Որոշվեց նաև, որ խմբակցութունները ցանկակացած ժամանակ կարող են փոխել իրենց խմբակցության խոսնակին և խմբակցության ցանկացած անդամ անհրաժետության դեպքում կարող է առանձին ներկայացնել իր կարծիքը:

✓ **Ներկայացվեց** ԱՃԹՆ միջազգային քարտուղարության հարցադրումը ԲՇԽ-ի անդամներին օրապահիկերի տրամադրման վերաբերյալ: Պարզաբանվեց, որ աշխատակարգում սահմանված է, որ ԲՇԽ-ի անդամները ԱՃԹՆ-ի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով և ներկայումս չի նախատեսվում ԲՇԽ-ի անդամներին օրապահիների վճարում:

6. ԲՇԽ-ի աշխատակարգի ընդունման մասին որոշման կայացում

Որոշվեց նոյեմբերի 26-27-ը կայանալիք ԲՇԽ-ի աշխատանքային հանդիպման ժամանակ ԲՇԽ-ի աշխատակարգում կատարել համապատասխան փոփոխությունները և ԲՇԽ-ի աշխատակարգը համարել ընդունված:

7. Հայաստանի ԱՃԹՆ ԲՇԽ-ի առաջիկա աշխատանքների քննարկում (ըստ ներկայացված ժամանակացույցի) և հաջորդ նիստի ժամկետի հաստատում

Ներկայացվեց ԲՇԽ-ի անդամներին նախօրոք տրամադրված ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի և Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի մշակման, հաստատման և ներկայացման աշխատանքների նախնական ժամանակացույցը և որոշվեց մինչև տարեվերջ ՀՀ ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի ներկայացման աշխատանքները կազմակերպել և իրականացնել ըստ ժամանակացույցի:

8. ԲՇԽ-ի անդամների կողմից բարձրացված այլ հարցերի քննարկում

Առաջարկվեց մատնանշել ՀՀ ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի ներկայացման համար անհրաժեշտ այլ՝ պահանջվող և դեռևս չիրականացված աշխատանքները, և հակիճ ներկայացվեց ՀՀ ԱՃԹՆ-ի թեկնածության հայտի կառուցվածքը:

Ներկայացվեց նոյեմբերի 26-27-ը կայանալիք ԲՇԽ-ի աշխատանքային հանդիպման օրակարգը, որի նպատակն է Հայաստանի ազգային առաջնահերթությունների և աշխատանքային ծրագրի հիմնական դրույթների մշակումը: